

**ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիրքորոշումը «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» և «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենքներով սահմանված բժշկական գաղտնիք հանդիսացող տեղեկատվության փոխանցման վերաբերյալ**

1. Բժշկական գաղտնիք համարվող տվյալներն առանց պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության փոխանցելու կարգը

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Դատարան) ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ անձնական տվյալների պաշտպանությունը, հատկապես բժշկական տվյալները, հիմնարար նշանակություն ունեն անձի՝ իր անձնական կյանքի հարգանքի իրավունքից օգտվելու համար, ինչպես երաշխավորված է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (Կոնվենցիա) 8-րդ հոդվածով: Առողջապահական տվյալների գաղտնիությունը հարգելը հիմնարար սկզբունք է Կոնվենցիայի բոլոր Պայմանավորվող կողմերի իրավական համակարգերում: Կարևոր է ոչ միայն հարգել պացիենտի գաղտնիության զգացումը, այլև պահպանել վստահությունը բժշկական մասնագիտության և առհասարակ առողջապահական ծառայությունների նկատմամբ<sup>1</sup>:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն. «բժշկական գաղտնիք է համարվում պացիենտի առողջական վիճակի մասին կամ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու համար դիմելու կամ ստանալու մասին, ինչպես նաև բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու ընթացքում պարզված տվյալները»:

Բժշկական գաղտնիք համարվող տվյալները, առանց պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության, կարող են փոխանցվել միայն օրենքով նախատեսված սուբյեկտներին և դեպքերով Կառավարության սահմանած կարգով:

Կառավարության կողմից բժշկական գաղտնիք համարվող տվյալների փոխանցման կարգ ընդունված չէ<sup>2</sup>, մինչդեռ վերոգրյալ նորմից բխում է, որ այն դեպքերում, երբ պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնությունը բացակայում է, բժշկական գաղտնիք համարվող տվյալները պետք է փոխանցվեն միայն այդ կարգով:

Հարկ է նկատել, որ գործող խմբագրությամբ նորմը ընդունվել է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2020 թվականի մայիսի 6-ի ՀՕ-268-Ն օրենքի հիման վրա: Իսկ անցումային դրույթներում մինչև Կառավարության կողմից որոշման ընդունումը

<sup>1</sup> Z. v. Finland, 9/1996/627/811, European Court of Human Rights, 25 February 1997, para. 95 available at: <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-58033> [accessed 21 September 2021].

<sup>2</sup> 07.02.2022 հանրային քննարկման է դրվել «Բժշկական գաղտնիք համարվող տվյալները առանց պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության փոխանցելու կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը: Հասանելի է՝ <https://www.e-draft.am/projects/3965/justification> :



գաղտնիք համարվող տվյալների փոխանցման կարգի վերաբերյալ կանոն սահմանված չէ, մինչդեռ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. «Եթե օրենսդրական ակտով (բացառությամբ Սահմանադրության) սահմանված նորմը կարող է կատարվել միայն այդ ակտով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, ապա օրենսդրական ակտի անցումային դրույթներով սահմանվում են նաև՝ 1) օրենսդրական ակտի այն մասերը, որոնք գործելու են ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից. 2) ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը»:

Այսպիսով, պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության բացակայության պայմաններում բժշկական գաղտնիքի փոխանցումն ամրագրող նորմը ուղղակիորեն պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի՝ Կառավարության որոշման ընդունմամբ, մինչդեռ անցումային դրույթներում այդ հարցի կարգավորումը բացակայում է:

ՀՀ վարչապետի՝ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2020 թվականի մայիսի 6-ի ՀՕ-268-Ն օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին 2020 թվականի հուլիսի 28-ի թիվ 859-Ա որոշման հավելվածի 9-րդ կետում նախատեսված է «Բժշկական գաղտնիք համարվող տվյալներն առանց պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության փոխանցման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը» միջոցառումը: Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու համար պատասխանատու պետական կառավարման մարմինը ՀՀ առողջապահության նախարարությունն է, իսկ նախագիծը ներկայացնելու ժամկետը 2021 թվականի մարտի 2-րդ տասնօրյակն էր: Ի պատասխան ՀՔԱ Վանաձորի գրասենյակի գրության ՀՀ առողջապահության նախարարությունը 16.06.2021թ. պարզաբանել է, որ միջոցառման կատարման աշխատանքները դանդաղել են և իրավական ակտի նախագիծը դեռ գտնվում է մշակման փուլում՝ պայմանավորված կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման նպատակով արտակարգ դրություն հայտարարելու, Արցախի Հանրապետության դեմ 2020թ. սեպտեմբերի 27-ից սանձազերծված պատերազմի և Առողջապահության նախարարության մասնագետների աշխատանքի ծանրաբեռնվածությամբ:

Այսպիսով, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 11-րդ հոդվածը պարտավորեցնում է գաղտնիք համարվող տվյալը փոխանցել միայն ըստ համապատասխան մշակված կարգի, մինչդեռ կարգի բացակայության պայմաններում անհայտ է, թե ինչպես պետք է վարվի գաղտնիքին տիրապետող սուբյեկտը, քանի որ օրենքը պարտավորեցնում է ղեկավարվել մի կարգով, որը դեռևս ընդունված չէ և անհայտ է, թե երբ



կրնդունվի: Նշված օրենսդրական բացն առաջացնում է հակասական իրավակիրառ պրակտիկա և ըստ էության բացառում է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի իրացման հնարավորությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք հնարավորինս սեղմ ժամկետներում ընդունել «Բժշկական գաղտնիք համարվող տվյալներն առանց պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության փոխանցման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

*2. Բժշկական գաղտնիքի փոխանցման հետ կապված «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» և «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենքների համեմատական վերլուծություն*

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» և «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենքները կարգավորում են բժշկական գաղտնիքի փոխանցման հետ կապված հարաբերությունները, սակայն այդ կարգավորումներում առկա են հակասություններ:

«Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բժշկական գաղտնիք է համարվում անձի՝ բժիշկ-հոգեբույժին կամ հոգեբուժական կազմակերպություն ղիմելու փաստի, իր առողջական վիճակի, հետազոտման, ախտորոշման և բուժման ընթացքում պարզված տեղեկությունները: «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենքի 16-րդ հոդվածը սահմանում է նշված տեղեկությունների փոխանցման կարգ, որն իր բնույթով տարբերվում է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 11-րդ հոդվածից բխող կարգավորումից: Մասնավորապես, ինչպես նշվեց 1-ին կետում, բժշկական գաղտնիք համարվող տեղեկությունները կարող են փոխանցվել միայն Կառավարության կողմից սահմանված կարգով, մինչդեռ «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենքը որպես փոխանցման կարգ վկայակոչում է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքով նախատեսված կարգը: Նման տարբերակումն անհասկանալի է, քանի որ անձի՝ բժիշկ-հոգեբույժին կամ հոգեբուժական կազմակերպություն ղիմելու փաստի, իր առողջական վիճակի, հետազոտման, ախտորոշման և բուժման ընթացքում պարզված տեղեկությունները նույնպես ներառվում են «բժշկական գաղտնիք» ընդհանուր եզրույթի մեջ և գտնվում են «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի կարգավորման դաշտում:

Բժշկական գաղտնիք կազմող տեղեկությունների փոխանցման հետ կապված կարգավորումների տարբերությունը՝ կախված նրանից, թե տվյալը վերաբերում է անձի ֆիզիկական, թե հոգեկան առողջությանը առաջացնում է հակասություն և խառնաշփոթ:



Մասնավորապես, հստակ չէ, թե ո՞ր կարգով պետք է ղեկավարվի տվյալներին տիրապետող սուբյեկտը այն փոխանցելիս՝ կառավարության կողմից սահմանված, թե «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքով նախատեսված:

Բացի այդ, ՀՀ վարչապետի՝ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2020 թվականի մայիսի 6-ի ՀՕ-268-Ն օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին 2020 թվականի հուլիսի 28-ի թիվ 859-Ա որոշման հավելվածի 9-րդ կետում նախատեսված միջոցառումը վերաբերում է առհասարակ բժշկական գաղտնիքի փոխանցման վերաբերյալ օրենսդրական կանոնակարգմանը, հակառակ պայմաններում, Կառավարության կարգի ընդունումից հետո, հոգեկան առողջության հետ կապված բժշկական գաղտնիքի փոխանցումը որպես հատուկ նորմ չի ենթարկվի նշված կարգի կարգավորմանը, քանի որ վերջինիս նկատմամբ կիրառելի կլինի «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքով նախատեսված կարգը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք բժշկական գաղտնիքի (ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեկան առողջության) փոխանցման հետ կապված հարաբերությունները կարգավորել «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքով՝ բացառելով հակասությունները և տարրնթերցումները:

Անդրադառնալով նաև այն սուբյեկտներին, ում բժշկական գաղտնիք հանդիսացող տվյալները կարող են փոխանցվել՝ նշենք, որ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» և «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենքներն ի թիվս այլ սուբյեկտների՝ նախատեսում են նաև հետաքննության մարմնին (օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին), քննիչին, դատախազին, դատարանին՝ իրենց վարույթային պարտականությունները կատարելիս բժշկական գաղտնիք հանդիսացող տվյալները փոխանցելու կարգավորումներ, սակայն վերջիններս չեն նույնանում, մասնավորապես.

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. «Բժշկական գաղտնիք համարվող տվյալները, առանց պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության, Կառավարության սահմանված կարգով կարող են փոխանցվել միայն՝ (...): 9) հետաքննության մարմնին (օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին), քննիչին, դատախազին, դատարանին՝ իրենց վարույթային պարտականությունները կատարելիս, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանին՝ պատճառաբանված որոշման հիման վրա»:

«Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Բժշկական գաղտնիք համարվող տվյալները կարող են «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքով նախատեսված կարգով փոխանցվել միայն՝ 3) հետաքննության մարմնին (օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող



մարմնին), քննիչին, դատախազին, դատարանին՝ իրենց վարույթային պարտականությունները կատարելիս»:

Վերոգրյալ երկու նորմերի վերլուծությունից պարզ է դառնում, որ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի համաձայն՝ բժշկական գաղտնիք համարվող տվյալները հետաքննության մարմնին (օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին), քննիչին, դատախազին, դատարանին՝ իրենց վարույթային պարտականությունները կատարելիս տրամադրվում են միայն պատճառաբանված որոշման հիման վրա, մինչդեռ «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենքով նման պահանջ նախատեսված չէ: Միաժամանակ, ընդհանուր կարգավորումը պարունակող իրավական ակտում որպես բժշկական գաղտնիքին տիրապետելու իրավասություն ունեցող սուբյեկտ նշված է Մարդու իրավունքների պաշտպանը, ինչը «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենքում բացակայում է:

Հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնողների գործողությունների (ներառյալ՝ անգործության) նկատմամբ հասարակական մշտադիտարկում իրականացնող դիտորդների խումբը նույնպես պետք սահմանվի «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասում որպես բժշկական գաղտնիքին հասանելիություն ունեցող մարմին: Հոգեբուժական օգնություն և սպասարկում ստացող անձանց առողջական վիճակի վերաբերյալ տեղեկատվության փոխանցումը հասարակական դիտորդական խմբին հնարավորություն է տալու բացահայտելու հոգեբուժական հաստատություններում իրավունքների խախտումները և նվազեցնելու վատ վերաբերմունքի դրսևորումները:

Այսպիսով, առաջարկում ենք «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3. հետաքննության մարմնին (օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին), քննիչին, դատախազին, դատարանին՝ իրենց վարույթային պարտականությունները կատարելիս, Մարդու իրավունքների պաշտպանին, ինչպես նաև Հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնողների գործողությունների (ներառյալ՝ անգործության) նկատմամբ հասարակական մշտադիտարկում իրականացնող դիտորդների խմբին պատճառաբանված դիմումի կամ որոշման հիման վրա:

### *Առաջարկություններ*

*1. Սեղմ ժամկետներում ընդունել «Բժշկական գաղտնիք համարվող տվյալներն առանց պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության փոխանցման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:*

*2. Բժշկական գաղտնիքի փոխանցման հետ կապված հարաբերությունները*

կարգավորել միայն «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքով՝ անկախ նրանից՝ տեղեկությունը վերաբերում է անձի ֆիզիկական, թե հոգեկան առողջությանը:

3. «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3. հետաքննության մարմնին (օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին), քննիչին, դատախազին, դատարանին՝ իրենց վարույթային պարտականությունները կատարելիս, Մարդու իրավունքների պաշտպանին, ինչպես նաև Հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնողների գործողությունների (ներառյալ՝ անգործության) նկատմամբ հասարակական մշտադիտարկում իրականացնող դիտորդների խմբին պատճառաբանված դիմումի կամ որոշման հիման վրա»:

4. «Հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնողների գործողությունների (ներառյալ՝ անգործության) նկատմամբ հասարակական մշտադիտարկման իրականացման կարգը և հասարակական դիտորդների խմբի իրավասությունը սահմանելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի թիվ 63-Ն հրամանի 17-րդ կետը «դեպքում» բառից հետո լրացնել «, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:» բառերով: